ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 դեկտեմբերի 2012թ. № 191-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՇԱՂԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի, <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 23-րդ հոդվածի, 48-րդ հոդվածի 2-րդ մասի, 244^9-րդ և 305-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 42-րդ հոդվածի 2-րդ կետի, <<Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդված 3-րդ կետի դրույթներով և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի գեոդեզիայի և հողային պետական տեսչության պետի 2012 թվականի նոյեմբերի 13-ի N 6 որոշման, **որոշում եմ.**

1. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի ինքնակամ զավթումն և դրա հետևանքները չվերացնելու համար Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Շաղատ գյուղական համայնքի ղեկավար Տիգրան Խաչատրյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ նրա նկատմամբ կիրառելով <<տուգանք>> վարչական տույժը՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:
2. Վարչական իրավախախտման համար կիրառված տուգանքը 15-օրյա ժամկետում ենթակա է մուտքագրման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:
3. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2012թ. դեկտեմբերի 25
ք. Կապան